



ՈՐՈՅՈՒՄՆԵՐ

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ
22-ՐԴ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ

1915

ՔԱՂԻԱԾՔՆԵՐ

1916

«Հայրենիք»ի Տպարան
Պուրօն

ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒԽ ՀԱՄԱՐ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ
22-ՐԴ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ

(Քաղաքածուներ)

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Շըր
ջանի 22րդ Պատգամառորական Ժողովը
բացւեցաւ 1915 Դեկտեմբեր 22ին, երեկոյան
ժամը ութին, Պատմօնի մէջ։ 106 կու-
միտէներէն ու խմբերէն կմասնակցէին 71
կոմիտէներ 97 ձայներով։ Կեղը. Կոմիտէ,
Գործիչներ, Պատմօնի, Նիւ Եօրքի և Քա-
նատայի Շրջանային Խորհուրդներէ մէ-
կական ձայնով։ Բնդամէնը 102 ձայնե-
րով։

Կոմիտէ	Զայն
Պատմօն	8
Պրաքթըն	1
Ուայթինսվիլ	3
Ինտիլն Օրչըրտ	
Փալմըր	1
Ուէստ Հուզոքըն	1
Բրոթըթառուն	3

Աէլլիժ	1
Փօրթլէնտ	2
Նիակարա Ֆօլս	2
Միտլալորս	1
Լին	2
Լոռէլէ	2
Հէյլըրհէլ	2
Նիւ-Հէյլըն	1
Նիւ-Եօրք	3
Նիւ-Պրիթէյն	2
Նիւթըն Բիփըր Ֆօլս	1
Մեսինա	1
Մանչէսթըր	2
Հարթֆլըտ	1
Միթըրտ	2
Համիլթըն	1
Կոլթ	1
Ֆրէզնօ	1
Ֆրէնքլին	2
Տէրրի	1
Պրուքլին	1
Պրիճութր	1
Պրիճութը	1
Սէնթ Լուկ	2
Իսթ Սէնթ Լուիզ	1
Լյըրըն	2
Քէնթըն	2
Կրանիթ Սիթի	1

Պինկհէմթըլն	1
Բէյմպլին	2
Իսթ Ուէյմըլթ	1
Զլոի	3
Սառլթհ Պօսթօն	1
Ֆիչպուրկ	2
Շիքակօ	
Ուէստ Փուլմըն	
Քըտի	
Բէյսին	4
Քինօչա	
Ուօքէկըն	
Միլուօքի	
Սառլթհ Միլուօքի	
Մէտիսըն	1
Սէնթրըլ Ֆօլս	3
Պրիճփորթ	1
Լորէնս	2
Միբաքիւդ	2
Բօչէսթըր	
Փրօվիտէնս	4
Հէրքիմթըր	2
Եութիքա	
Նիւ-Բէսըլ	1
Փօնթիաք	
Բութրուիթ	2
Սփրինկիլու	
Ափրինկիլու	2

Նաշուէ	1
Ուստր	3
Ֆիլամտէլֆիա	2
Ունսաքէթ	1
Քէմտըն	1
Թրոյ	1
Ուօթրովիթ	1
Փէթըրուըն	1
Նիւ-Պրիփորթ	1
Կեդր. կօմիտէ	1
Գործիչներ	1
Պութօնի Շրջ. Խորհուրդ	1
Նիւ-Եօրքի Շրջ. Խորհուրդ	1
Քանատափի Շրջ. Խորհուրդ	1
Հրաւիրած էին խորհրդակցական ձայներով :	5

Պատգամաւոր ընկերներու իրաւասութիւնը Քննող Յանձնախմբի տեղեկագրւէն յայտնեցաւ որ,

Ա.) Կուէլֆի կօմիտէն Ներքին Կանոնագրի յօդ. 98ի տրամադրութեան հակառակ քայլ մ'առած էր, տալով իր ձայնը Պութօնի շրջանի կօմիտէներու մէկուն պատգամաւոր ընկերոջ մը, հակաօրինական ըլլալուն մերժւեցաւ, որով Կուէլֆ առանց պատգամաւորի մնաց :

Միևնոյն նկատումով մերժւեցաւ Քլիվլէնտի կօմիտէի յանձնարարած ձայնը,

որով Քլիվլէնտի կօմիտէն առանց պատգամաւորի մնաց :

Գ.) Ուխմընտի կօմիտէն իր ձայնը տրած էր Նիւ-Եօրքի Շրջ. Խորհուրդին, մերժւեցաւ, նկատելով հակաօրինական : Ուխմընտի կօմիտէն մնաց առանց պատգամաւորի :

Դ.) Նիւ-Բէսլի կօմիտէն իր ձայնը տրած էր Պոսթօնի շրջանի կօմիտէներու մէկու ոչ-պատգամաւոր ընկերոջ մը, ընդունեցաւ :

Ե.) Ուխմուսքի կօմիտէն իր ձայնը տրած էր Պոսթօնի Շրջ. Խորհուրդի անդամ ներէն մէկուն, մերժւեցաւ նկատելով հակաօրինական : Ուխմուսքի կօմիտէն մնաց առանց պատգամաւորի :

Զ.) Պինկէյմի կօմիտէն իր ձայնը կուտար Կեդր. կօմիտէին, հակաօրինական ըլլալուն մերժւեցաւ : Պինկէյմի կօմիտէն մնաց առանց պատգամաւորի :

Է.) Լորէնսի կօմիտէի վարչութիւնը, իր կօմիտէի պատգամաւորին մէկուն իրաւասութիւնը կասկածի ենթարկելուն համար որոշեցաւ խիստ նկատողութիւն ընել :

Հետեւեալ կօմիտէներ այլեւայլ պատճառներով մասնակցած չէին .

Պէթըրնտօրֆ, Պըֆֆլո, Զարլոթառն, Քանքըրտ, Տիթրոիթ (քաղաք), Իրի, Ֆա

ուլըր, Սիթի Փօյնթ, Այլընտ Թօլու, Քանս-
սաս Սիթի, Լու Անձէլու, Միլլս, Նօրթհ
Տէյթըն, Տընտես, Սանֆրանչիսկո, Սէնթ
Փօլ, , Փայն Կրավ, Սէնթ Քէթրինս, Սէնթ
Փօդէփ, Թօլէտո, Մթօնհէմ, Մարլզօրո,
Նիւարք:

Սինսինաթի, Ինտիանափօլիս, Փարվիըր
խմբեր ըլլալուն, ըստ ներքին կանոնադրի
իրաւասու չէին պատգամաւորներ դրկել:

Ա) ԿԱՄԱԽՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Ընդունելով որ կամաւորական շարժու-
մը վրէժինդրական, ինքնապաշտպանա-
կան եւ դիւանազիտական տեսակէտներէ
հայութեան համար առաջնակարգ հրամա-
յական մըն է . բայց հիմք ունենալով կով-
կասէն հասած պաշտօնական տեղեկու-
թիւնները, որոնք Ամերիկայէն առայժմ
կամաւորներ դրկելու պէտքը չեն չեշտեր,
Որոշեց՝

Ա) Հայ Ազատագրական ներկայ պայքա-
րի ընթացքին՝ նիւթական ու բարոյական
բոլոր միջոցներով ու թափով օժանդակ
կանգնիլ կամաւորական շարժումին.

Բ) Թէլագրեց Կեդր. Կօմիտէին Ամերի-
կայէն կամաւորներ դրկելու նոր պահանջ
ներկայանալու ատեն, իր կողմէ պէտք ե-

ղած միջոցները ձեռք առնել բաւարարու-
թիւն տալու եղած պահանջին:

Գ) Ամենախիստ ուշագրութիւն դարձնել
կամաւորներու ընտրութեան ատեն կու-
սակցական դանձէն ուեէ դրամ չյատկացը-
նել դրկելիք կամաւորներուն, այլ բանակ
ցիլ Ազգային Բիւրօի հետ մասնաւոր մար-
տական եւ սանհիտարական (բժշկական)
ընդունակութիւն ունեցող անհատ կամա-
ւորներու տրամադրել նիւթական աջակ-
ցութիւն Ազգային Բիւրօի դանձէն:

Բ) ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Ա) Նկատի ունենալով, որ ներկայ հա-
մաշխարհային պատերազմի ժամանակ,
երբ իւրաքանչիւր ազգութիւն արտաքին
վտանգն ի նկատի ունենալով, իր բոլոր
զորող տարրերն միատեղ հաւաքեր է.

Բ) Որ հայ ժողովրդի ներկայ աղեխարչ
դրութիւնը մեր վրա ազգային սրբազն
պարտք կղնէ բոլորւիլ ազգային պէտքե-
րու չուրջ.

Գ) Որ, ապազայ քաղաքական եւ դիւա-
նագիտական աշխատանքներու համար,
մեծ պետութիւններուն մեր ազգային հա-
մագործակցութեամբ ցոյց պիտի տանք քա-
ղաքական հասունութեան ապացոյց.

Դ) Որ, անհրաժեշտ է առնւած քայլերն ու ընդհանուր ազգային կամքը համընթաց ըլլան, որպէս զի զանազան արտաքին մութ տարրեր եւ ցեղեր հնարաւորութիւն չ'ունենան մեր ջլատւած գրութենէն օգտւելու :

Ե) Որ, այդ գործակցութեամբ հայ ժողովրդի հոգեկան հաւասարակշուութիւնն ու նիւթական զոհաբերութիւնը կապահով է :

Պատղամաւորական ժողովս, սկզբունքով համաձայն է համերաշխութեան եւ պատրաստակամ ամէն բոպէ ընդ առաջ երթարևու իւրաքանչիւր մաքուր եւ անկեղծ վերաբերմունքէ բդիսած ձեռնարկի, եւ կը թերադրէ կեղր. Կօմիտէին ապագային ընթիք ձեռնարկներու ժամանակ, աչքի առաջ ուննալ, ստեղծուած ազգային իրական պայմանները, հայ գատի համար մըզ ւելիք կուրի ընթացքն եւ այդ տեսակէտէն համագործակցութեան մէջ մտնել այն հռանքներու, կուսակցութիւններու եւ Ազգային Կեդրոնական Մարմիններու հետ, որոնք հայ ժողովրդի ապագայ Ազատութիւնը եւ դիւանադիտական աշխատանքները կհիմնեն նաեւ մարտական ուժի եւ կազմակերպւած կուրի վրա :

Միենոյն ատեն Ամերիկայի Հ. Յ.

Դաշնակցութեան Պատղամաւորական ժողովն իր ընկերական հաստատուն ցանկութիւնը կրայտնէ Կովկասի Դաշնակցական Մարմիններու, որ անոնք անդամ մ'եւս կեղրոնացնեն իրենց ուժը համագործակցութիւն ստեղծելու՝ Հայկական Իրականութեան մէջ դունւած բոլոր հոսանքներու մէջ եւ կամ ամէն հնարաւոր միջոցներու զիմելու՝ վերջ տալ զանազան անհամաձայն դործունէութեանց :

Գ) ՄԵՐ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՒՆ ՀԵՏ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿԱ ՄԱՐՄԻՆ ՄԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Նկատելով, որ արդէն Հ. Յ. Դաշնակցութեան կեղր. Կօմիտէն իրը Հայկական կեղր. Կօմիտէ Ազգային Բիւրօի Օժանդակ Մարմին մըն է Ամերիկայի մէջ, եւ արդէն իր հանգանակային ժողովները սկսած են նախորդին պէս, ընդունելով, որ առանձին Օժանդակ կեղր. Մարմին մը ստեղծելն օգտակար է, թելադրել նորընտիր կեղր. Կօմիտէին՝ կարելի եղած միջոցները ձեռք տոնել համապատասխան կեղր. Մարմին մը կազմել աստղագային, եթէ նոր պայմանները պահանջ դնեն.

Ուռչեց,

Ա.) Թելադրել կեդր . Կօմիտէին , որ այս ուղղութեամբ բանակցութիւններ կատարէ Ազգային Բիւրօի հետ :

Բ.) Հնարաւորութիւն ունեցող կօմիտէներուն թողուլ իրենց տեղույն վրա չեղոք հասարակութենէն , իրենց օժանդակներ առնելով դործը վարել նախորդ հանդանակային ժողովներու դրութեամբ :

Դ) Ա.ԶԳ. ԲԻՒՐՕԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ԱՐԿԵԼ

Սկզբունքով ընդունելով հանդերձ , որ արդարացի եւ բաղձալի է ներկայացուցիչ մը ունենալ Ազգային Բիւրօին մէջ , քանի որ անոր մեծագոյն ճիւղերէն մէկը կիաղմենք , բայց նկատի ունենալով , որ Բիւրօն ընարովի կազմած մարմին մըն է , որ ոռուսական կառավարութիւնը կրնայ գըժաւարութիւններ հանել , թելադրել նոր ընտիր կեդր . Կօմիտէին այդ ուղղութեամբ բանակցութիւններ վարել Ազգային Բիւրօին հետ և եթէ հնարաւոր ըլլայ ներկայացուցիչ մը ասկէ զրկել եւ կամ անկէ նշանակել :

Ե) ՆԵՐԲԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱԲՆՈՒԹԻՒՆ

Ներքին կանոնագրի վերաբնութեան համար , որոշեցաւ թոյլատրել կեդրոնական Կօմիտէին , որ յաջորդ տարւան համար հրատարակութեան տայ Ներքին կանոնագիրն այն յաւելումներով , որոնք որպէս օրակարգի առանձին նիւթ՝ Պատգամաւորական Ժողովի կողմէն իրր որոշումներ անցւեցան :

Զ) ԱՄԵՐԻԿԱՆԱՅԻ ԹԵՄԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ամերիկայի Պատգամաւորական Ժողովը թեմական խնդիրներու մէջ սկզբունքով մնալով հանդերձ վերջին Ընդհանուր Ժողովին որոշման վրա , որ կարգիէ Կաղմակերպութեան պաշտօնական մասնակցութիւնը եկեղեցական խնդիրներու մէջ , բայց նկատի ունենալով , որ կապրինք բացառիկ ըրջանի մը մէջ , եւ եկեղեցական իշխանութիւնները դուրս գալով գուտ եկեղեցական գործերէ միջամտին կըլլան քաղաքական գործերու եւ կհակազդեն ազգային շահերուն , կհրահանգէ ընկերունը հաւաքարար անպաշտօն կերպով իրեւ անհատ ազգայիններ մասնակցին թեմական գործերու :

է) Ա.Հ.Ս.Տ.Կ.Ի.Ո. ԸՆԿԵՐՆԵՐՈՒԽ ՈՐԲԵՐՈՒԽ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱԼԱՐԵԱՆ ՖՈՆՆԵՐՈՒԽ ՀԱՐՑ

Պատգամաւորական Ժողովը նկատի ունենալով նահատակւող ընկերներու Որբերու կրթութեան եւ Զաւարեան ֆօնտերու դործածութեան հարցերը՝

Որոշեց՝

Առաջինը յատկացնել արդէն գծած նըստակին, իսկ Զաւարեան ֆօնտով կովկասի մէջ որբեր պահել իր անունով։

Ը) Ա.Դ.Ա.Մ.Ա.Վ.Ճ.Ա.Մ.Ն.Ե.Ր.Ո.Խ ՀԱՐՑ

Նկատի ունենալով, որ ամբողջ 1915 տարւան ընթացքին Հ. Յ. Դ. Կերպոնական Կօմիտէն իր կուսակցական դործունէութիւնը զոհեց Ազգային Ընդհանուր Շարժումին, եւ կուսակցական տարրերը ամբողջապէս արամադրեց Ազգային Բիւրօին։

Նկատի ունենալով նաև, որ հանդահակային երկրորդ չրջանի ժողովները արդէն սկսած են որոշ թափով կօմիտէները իրենց հանդանակային ժողովները կատարած են։

Որոշեց՝

Ա) 1916 տարւան չրջանի հանդանակութիւններն ալ ընել 1915 տարւան սիստէմով, մասնակցիլ տուրքերով միասին։

Բ) Նկատելով, որ ընկերները չափէն աւելի ծանրաբեռնած են որոշ զոհողութիւններով ներկայ տարւան ընթացքին՝ սկզբունքով կմէրժէ ընկերներու վրա յաւելեալ տուրք մը դնելու դրութիւնը։

Ծ) ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԵԽԻՆ ՄԻԱՄԵՍՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Հ. Յ. Դ. Ամերիկայի 22-րդ Պատգամաւորական Ժողովը լսելով Կելքոնական Կօմիտէի ակլեկագիրը եւ եղած հարցապընումներուն պատասխան-բացատրութիւնները, եկաւ հետեւեալ եղակացութեան։

Ա) Նկատելով, որ անցեալ տարեշրջանն ըլլալով հայկական կեանքի եւ մասնաւորակէս ամերիկահայ գաղութային կեանքի ամենաբեղուն և աղմկալից չրջաններէն մէկը։

Բ) Որ, կուսակցական ուժերն անբաւական ըլլալով հանդերձ լիուլի գոհացում տալու եղած կուսակցական պահանջներուն։

Գ) Որ, ամերիկահայ կամառորներու

երկրորդ խմբի առաքման գործին մէջ,
չնախատեսնեած գժւարութիւններու բաղ
խելով նիւթական եւ բարոյական փրէո-
թիժին վնաս պատճառած է .

Դ.) Որ , պատգամաւորներու ըրած նը-
կասողութիւններն իրենց որոշ մանրա-
մասնութիւններուն մէջ գտնելով իրաւա-
ցի եւ կարեւոր , պէտք է յանձնել յաջորդ
կեղր . Կօմիտէի նկատողութեան ,

Կյայտարարէ ,

Ա.) Որ , կեղրոնական Կօմիտէն իր ընդ-
հանուր գործունէութեան մէջ առաջնորդ-
ուեր է անցեալ Պատգամաւորական Ժողո-
վի որոշումներուն համաձայն .

Բ.) Որ , ընդհանրապէս , իր գործունէու-
թեամբ կարողացած է նոյնիսկ լայն չա-
փերով բաւականութիւն տալ կուսակցա-
կան եւ ազգային բոլոր այժմէական պա-
հանջներուն ,

Պատգամաւորական Ժողովն իր գոհու-
նակութիւնը կյայտնէ կեղրոնական Կօմի-
տէին՝ նոյնպէս եւ ընկեր գործիչներուն ,
իրենց միամեայ գործունէութեան հա-
մար :

Ժ) «ՀԱՅՐԵՆԻՔ»

Ա.) կեղրոնական Կօմիտէն ըլլալով Ա-
մերիկայի Հ . Յ . Գերագոյն Մարմինը

պարտաւոր է լուրջ ուշադրութեամբ ըն-
թանցք տալ մեր մամուլի զարդացման եւ
անոր փրօփականտի ուղղութեան :

Պէտք է նկատի ունենալ ,

Ա.) Որ , կեղրոնական Կօմիտէն բացար-
ձակ իրաւունք ունի քօնթրոլի ենթարկե-
լու մեր մամուլի («Հայրենիք» եւ «Աս-
պարէզ») տնտեսականը (Քալֆօրնիայի
շրջանի մէջ յանձնելով այդ բացառիկ
մարմնի մը՝ բաղկացած կարեւոր ընկեր-
ներէ) իր բոլոր ճիւղերով , միեւնոյն բա-
կըզբունքով ընդունիլ աշխատակիցները
վարձարելը՝ երբ խմբագրութիւնը կա-
րեւոր կնկատէ .

Բ.) Որ , կեղրոնական Կօմիտէն իրաւունք
ունի սկզբունքի անսակէտէն անոր ուղ-
ղութիւն տալու միջտ , երբ ոեւէ չեղում
կնկատի , նախապէս ուսումնասիրու-
թեան նիւթ գարձնելով կարեւոր ընկեր-
ներու եւ խմբագրական կազմի կողմէ :

Գ.) Որ , գրական եւ ակադեմական հար-
ցերու մէջ խմբագրական կազմը կվայելէ
լայն իրաւասութիւններ , սակայն եւ այն-
պէս կարեւոր փոփոխութիւններու պա-
րագային (որպիսիք են տառագարձութիւն
եւ ուղղագրական փոփոխութիւն եւայլն)
կեղրոնական Կօմիտէն պարտաւոր է ձե-
ռընհաս ընկերներու եւ խմբագրական կազ-

մի հետ խորհրդակցելով խմբագրութիւնն
էնթարկել սահմանափակումներու, եթէ
հարկ համարւի, նախապէս մշակւած կա-
նոնագրի մը համաձայն .

Դ) Որ, թերթերն իրենց գրական եւ քա-
ղաքական բարձր մակարդակի վրա պա-
հանուած համար պէտք է աւելցնել կարող ար-
տասահմանեան խմբագիր մը «Հայրենիք»-ի (եւ եթէ հնարաւոր է նաև «Ասպա-
րէզ»ի) ներկայ կազմին վրա եւ բարոյա-
կան պարտաւորութիւն կղնէ խմբագրու-
թեան վրա օգտաելու մեր բոլոր կարող ըն-
կերներու աշխատակցութենէն սիրաշահե-
լով զանոնք եւ ընկերական լաւ ու յար-
գալից յարաբերութեան մէջ մտնելով ա-
նոնց հետ .

Այս բոլորի հետ միասին Պատգամաւո-
րական ժողովը դոհունակութիւն կյայտ-
նէ Կեղրոնական Կօմիտէին, խմբագրա-
կան կազմին, վարչութեան «Հայրենիք»ի
տնտեսական բարելաւման, անոր գրա-
կան, բարոյական ազդեցութեան բարձ-
րացման և օրաթերթի վերածւելուն հա-
մար:

ԺԱ) «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՀԱՇԻԱԿԱՆ ՔՕՆԹ-
ՐՈՒ.

Որոշեցաւ պարտք դնել նորընտիր
Կեղրոնական Կօմիտէի վրա, որ Մնայուն
Յանձնախումբ մը ընտրէ պաշտօն տալով
անոր, ամբողջ տարւան ընթացքին քօնթ-
րովի ներկերկել հաշւական գործառնու-
թիւնն ու աեղեկագիր ներկայացնել Կեր-
րոնական Կօմիտէին եւ Ամերիկայի
Պատգամաւորական Ժողովին :

ԺԲ) ՇՐՋԱՆԱՑԻՆ ԽՈՐՀՈՒԹԻՆԵՐ

Որոշեցաւ Շրջանային Խորհուրդներու
տեղեկագրերը չկարգալ, նկատի ունենա-
լով թէ Կեղրոնական Կօմիտէն արդէն
պատշաճ տեղեկատութիւնը կընէ ա-
նոնց գործունէութեան մասին :

ԺԳ) «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ
ՀԱՐՑ

Ա.) Որոշեցաւ «Հայրենիք»ը պահել
Պօսթօնի մէջ :

Բ.) Նկատի առնելով ներկայ բոպէին ա-
նորոշ կացութիւնը, յարմար դատեցաւ
«Հայրենիք»ի սեփական չէնք ունենալու
հարցը յետաձգել առայժմ :

ԺԴ) «Ա.ՍՊԱՐԵԶ»

Պատգամաւորական ժողովը լսելէ և տք միքնոի պատգամաւոր ընկերով «Ասպարէզ» թերթի մասին տռած տեղեկութիւնը,

Նկատի ունենալով, որ «Ասպարէզ» ը շաբունակել անհրաժեշտ է փրօփականությունը համար.

Որ, թերթն արդէն անտեսապէս ինքնառապահ վիճակի մը մէջ կդառնելի.

Գոհանակութեամբ իմանալով նաեւ որ թերթին բաժնեսէրերը պատրաստ են զայն կազմակերպութեան նւիրելու.

Որոշեց,

Թերթն առնել կազմակերպութեան հովանաւորութեան տակ եւ կձեռք կերպոնական կօմիտէին հարկ եղածը տհօրինել այդ:

ԺԵ) ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ԵՒ Ա.ՏԵՆԱԽՕՄԵՆԵՐՈՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆԸ

Ա.) Գործիչներն իրաւասու են հետաքըլը թերթի կօմիտէներով հաշվաներով, ներքըլուի կործական պործին վերջին անհամաձայնութիւններին գործերով եւ անհամաձայնութիւններին պարտաւոր են սկզբ եղած հրահանդները տակ անոնց կանոնաւոր ընթացքին համար:

Բ) Պատական ինդիբներու մէջ, գործիչները հաշտարարի գերը միայն կկատարեն:

Գ.) Առենախօս ընկերները ուեւէ իրաւասութիւն չունին կօմիտէներու ներքին գործերու մէջ միջամուխ ըլլալու եթէ այդ մասին մասնաւոր գրաւոր հրահանդեւ թոյլտութիւն չունին Կեդրոնական կօմիտէչն :

Դ) Պատգամաւորական ժողովը կհրահանդէ Կեդրոնական կօմիտէն աւելի քօնթրոլ բանեցնել ատենախօս ընկերներու վըրա, որպէսզի անոնք աւելի շրջահայեց, մաքուր եւ չափաւոր ըլլան իրենց արտայայտութիւններուն մէջ եւ զգուշանան հըրապարակով պաշտօնական յայտարարութիւններ ընելիք կազմակերպութեան անունով:

ԺԶ) ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՀԱՐՑ

Պատգամաւորական ժողովը նկատի ունենալով կազմակերպական գործին վերջին տարւան ստացած ծաւալը.

Որոշեց,

Ունենալ առնեազն չորս գործիչ եւ պարտաւորել Կեդրոնական կօմիտէն՝ կարելի եղած միջոցներով իրագործելու ջանալ այս որոշումը:

ԺԵ) ԸՆԿԵՐՆԵՐՈՒԻ ԽՆՔՆԱԶԱՐԴԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐ

Պատգամաւորական ժողովը կթելադրէ
կեղբոնական կօմիտէին, որ գործածէ կա-
չելի եղած ամէն միջոց ընկերներու խնք-
նազարդացման սատարելու համար :

ԺԸ) ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀՐԱ-
ԽԻՐԵԼՈՒ ՉԵՒ

Նկատողութեան առնելով Խորհրդակ-
ցական ժողովներու անդամներ նշանակե-
լու ձեւը, Պատգամաւորական ժողովը կը
հաստատէ արդէն ընդունած ձեւը, որով
կեղբոնական կօմիտէն ազատ ճգլած էր իր
յարմար դատած ընկերներուն հետ խոր-
շըրդակցելու կարեւոր հարցերու մա-
սին, միայն թէ այդպիսի ընկերները խոր-
հըրդակցութեան հրաւիրելու պահուն
այդ պարագան պիտի տեղեկադրեի պատ-
կան կօմիտէին վարչութեան ի գիտու-
թիւն :

ԺԹ) ՕՏԱՐ ԳՐԱԽՈՐ ԵՒ ԲԱՆԱԽՈՐ
ՓՐՈՓԱԿԱՆՏ

Հ. Յ. Դ. 22րդ Պատգամաւորական ժո-
ղովը այս օրերսւն նախատակայարմար կը
դանէ ունենալ անդիւելէն թերթ մը, Հայ-
կական Դատին նւիրւած, եւ քանի որ նիւ

Արմէնիա կծառայէ այդ նպատակին, կը
թելադրէ քաջալերել զայն :

Բացի այդ, Կեդրոնական Կօմիտէն պէտք
է միջոցներ ձեռք առնէ Ամերիկեա՞ կա-
րեւոր թերթերու մէջ հայանպաստ յօդ-
ւածներ զետեղելու եւ միեւնոյն ատեն հա-
յերու դէմ գրւած ամբաստանութիւննե-
րու դէմ հերքումներ հրատարակելու :
Ուժ տալ նաեւ արդէն գոյութիւն ունե-
ցող հայանպաստ օտար մարմիններու :

Ի) ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓՈԽ-ՑԱՐԱԲԵՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ

Պատգամաւորական ժողովը գոհացու-
ցիչ դանելով Պալքանի եւ Եղիպատոսի կազ
մերուն հետ յարաբերութիւնները, իսկ
հնարաւորութիւն չունենալով պաշտօնա-
պէս սերտ կազ պահել թղթակցութիւն-
ներով կովկասի մեր Մարմնին հետ, նը-
պատակայարմար կգտնէ զրկել ժամանա-
կառորապէս յարմար ընկեր մը ասկէ, որ
այստեղի կացութիւնը պարզէ եւ անկէ
մանրամասն տեղեկութիւններ բերէ, ե-
թէ սակայն մինչեւ դարուն կովկասէն
սպասւած գործիչը չգայ :

ԻԱ) ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԽՄԲԵՐՈՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Պատղամաւորական ժողովը իրաւասութիւն տրաւ Կեդրոնական Կօմիտէին կաղմացնելու Յանձնախումբ մը, ընկերներէ եւ ընկերուհներէ, բարեփոխելու ներկայ կանոնագիրը: Կարմիր Խաչի Խմբերու վերաքննաւծ եւ Կեդրոնական Կօմիտէէ վաւերացւած կանոնագրին դործազրութիւնը յանձնեցաւ վերջին Մարմնին: Անւան փոփոխութեան խնդիրն ալ թողւեցաւ Կեդրոնական Կօմիտէին:

ԻԲ) ԿՕՄԻՏԷՆԵՐՈՒ ԻՐԱԿԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՀՄԱՆԸ ՄԵՐ ՈՒՐԻՇ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՇ

Պատղամաւորական ժողովը կընդունի տեղական Կօմիտէներու քօնթրումը դերասանական, զինավարժական եւայլն խըմբերու դործունէութիւններուն վրա եւ իւրը այդ կորոշէ, որ Կեդրոնական Կօմիտէն պատրաստէ այդ ուղղութեամբ մասնաւոր կանոնագիր մը և ցրւէ Կօմիտէներուն:

ԻԳ) ՄԻՈՐԻՆԱԿ ՀԱՇԻԵՊԱՀՈՒԹԻՒՆ

Կօմիտէներու միօրինակ հաշւեպահութեան համար նախորդ Պատղամաւորական ժողովին տրած որոշումը, որպէսզի կարելի ըլլայ գործադրել, Պատղամաւորական ժողովը կապարտագրէ նորընտիր Կեդրոնական Կօմիտէն, որ նախատեսնաւծ հինգ հարիւր տոլար ծախուը տրամադրէ այդ նպատակին:

ԻԴ) ՇՐՋԱՆԱՑԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱՊԵՍ ՎԵՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Պատղամաւորական ժողովը նկատի առանելով Շիքակօի եւ Քանատայի շրջաններուն հետաւորութիւնը եւ Շրջանային Խորհուրդներու յատկացւած պլռտճէին անրաւարարութիւնը, կյանձնարարէ նորընտիր Կեդրոնական Կօմիտէին, որ անմիջապէս նկատի առնէ այս պարագան և այդ Շրջաններու բաժանումը կատարէ աւելի լաւ կերպով:

ԻԵ) ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ ՏԵԽՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Պատղամաւորական ժողովներու տեղադրութիւնը չորսի փոխան վեց օր ընելու

ինդիրը, Պատգամաւորական Ժողովը ու
բոշեց նորընտիր Կեդրոնական Կօմիտէի
միջոցով հարցնել կօմիտէներուն եւ ըստ
այնմ կարգադրել:

ԻԶ) ԳՆԱՀԱՏԱՆՔ, ՊԱՇՏԱՄՈՒՆՔ,
ՑԱԽԱԿՈՒԹԻՒՆ

Որոշեցաւ փախստականէնքու ու զու-
հերու համակրանքի, նահատակող հե-
րոսներու պաշտամունքի եւ կուող հե-
րոսներու հայցմունքի հեռագիր մը դար-
նել Աղջային Բիւրօին ու «Հորիդանաին»:

Միևնոյն ատեն գնահատանքի և չնոր-
հակալութեան հեռագիր մըն ալ Աղջային
Բիւրօին դարնել:

ԻԵ) ՀԱՅԱՆՊԱՍՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ակդեռնքով ընդունեցաւ յանուն Ամե-
րիկայի Հ. Յ. Դ. 22րդ Պատգամաւորա-
կան ժարդակալութիւն յայտնել
այն ամէն հայանսսատ հաստատութիւնն-
երուն եւ հայասէր անձնաւորութիւննե-
րուն, որոնք ուեէ գնահատելի ծառայու-
թիւն մատուցեր են Հայ ազգին ներկայ ա-
զգատին առթիւ:

ԻԾ) ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՓՈԽԹԱՑՈՒՄ

Պատգամաւորական Ժողովը պարտք
դրաւ նորընտիր Կեդրոնական Կօմիտէին
վրա, որ հեռագրով գործիչներու շուտով
դաւլ խնդրէ:

ԻԹ) ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Նկատի ունենալով դատական յանձնա-
խմբի տւած վճիռները, անոնց գործա-
ծութիւնը յանձնեցաւ նորընտիր Կեդրո-
նական Կօմիտէին:

ԾԱՆՈԹ. Կ. Կ. Ի. — Յարմար դատւե-
ցաւ իւրաքանչիւր խնդիր ուղղակի իր
տեղւոյն մարմնին հաղորդել, քանի որ
լոկ տեղական բնոյթ ունեցող խնդիրներ
են:

Լ) Կ. Կ.-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Յանձնախմբի պատրաստած եռապատիկ
ցանկն զաղտնի քւէով նորընտիր Կեդրո-
նական Կօմիտէի անդամ ընտրեցան ըն-
կերներ Գ. Կ., Զ. Մ., Ա. Մ., Խ. Գ., Ն.
Թ., Գ. Ռ., Յ. Դ.:

Պատգամաւորական Ժողովը վերջացաւ
Դեկտեմբեր 26ին, երեկոյեան ժամը 8-ին:

Պատգամաւոր ընկերները մեկնեցան լաւ
տրամադրութեան տակ ու ոգեւորւած,
այն յոյսով, որ Պատգամաւորական ժու-
կովի որոշումները նիւթ պիտի մատակա-
րաբեն յառաջիկայ տարւան շինարար աշ-
խատանքներու, որով նորանոր նւաճում-
ներով սատարած պիտի ըլլան Հայ Ազա-
տագրութեան Դարբնումի Վեհ Գործին:

